

Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ում 18.03.2024թ. ժամը 11⁰⁰–ին:

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է.Մանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Ա.Ավետիսյան – Ֆինանսական վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Մարտիրոսյան - գլխավոր ճարտարագետ

Ե.Բաղդասարյան–ԳՏ տեղակալ

Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ

Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Ա.Մինասյան - ԿՏԱ պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Զաքարյան – ՏՏ բաժնի առաջին կարգի ճարտարագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. 200լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի ձեռքբերման գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Կայանի արտադրական կարիքների համար անհրաժեշտ է ձեռք բերել ինդուստրիալ յուղ: Նշված ապրանքի չափաքանակը գրված է 2024թ. երկրորդ եռամսյակի գնումների պլանով նախատեսված ժամանակացույցով (զեկուցագիր № 11, 13.03.2024թ.):

200լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՁԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է **ՀԶ-ՊԸ-ԻԹ-02/18.03.24** ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

Մրցակցային աղյուսակ

Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ	լիտր	200	ՀրազդէԿ ԲԲԸ	1. Ժակ և Գոռ ՍՊԸ	1590դր՝ ներառյալ ԱԱՀ-ն
	լիտր	200	ՀրազդէԿ ԲԲԸ	2. Մոսէսքո ՍՊԸ	1785 դր՝ ներառյալ ԱԱՀ-ն
	լիտր	200	ՀրազդէԿ ԲԲԸ	3. Արման Օիլ ՍՊԸ	1800 դր՝ ներառյալ ԱԱՀ-ն

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխանող և նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

- ՀԶ-ՊԸ-ԻՅ-02/?.03.24 ծածկագրով 200 լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին:
- Կնքել պայմանագիր «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 1լիտրը 1590 դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն, 200լիտր Ի-50 տեսակի ինդուստրիալ յուղ ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Է. Սանամյան

Ա. Ավետիսյան

Տ. Մարտիրոսյան

Ե. Բաղդասարյան

Լ. Մնացականյան

Ռ. Հակոբյան

Ա. Մինասյան